«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՌԵԿՏՈՐԱՏԻ

ՈՐՈՇՈՒՄ

23 Օգոստոսի 2022, N 1 - 1

2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով 2022-2023 ուսումնական տարվա ընդունելության արդյունքները և ուսանողների թվի կտրուկ աճը՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորատը **որոշում է.**

1. 2022-2023 ուսումնական տարվա դասերը սկսել ժամը 09:00-ին:

2. 2022-2023 ուսումնական տարվա ուսումնական գործընթացը կազմակերպել **3 հերթով**՝ դասերի տևողությունը սահմանելով **80 րոպե:**

Դասաժամեր	1-ին հերթ	2-րդ հերթ	3-րդ հերթ
1 - 2	09:00 - 10:20	13:40 - 15:00	18:20 - 19:40
3 - 4	10:30 - 11:50	15:10 - 16:30	19:50 - 21:10
5 - 6	12:10 - 13:30	16:40 - 18:00	21:20 - 22:40

3. Ուսումնական գործընթացի կազմակերպման հերթափոխերը սահմանել հետևյալ կերպ՝
   1) առկա բակալավրիատի 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսերը՝ առաջին հերթ,
   2) առկա բակալավրիատի 4-րդ կուրսը՝ երկրորդ հերթ,
   3) հեռակա բակալավրիատի և հեռակա մագիստրատուրայի բոլոր կուրսերը՝ երկրորդ հերթ,
   4) առկա մագիստրատուրայի ոչ երեկոյան կուրսերը՝ երկրորդ հերթ,
   5) առկա մագիստրատուրայի երեկոյան կուրսերը՝ երրորդ հերթ:

4. Դասացուցակները հրապարակել օգոստոսի 25-ին:

5. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Գրիգորյանին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ռեկտոր՝ **Դ. Գալոյան**

2022 թ. օգոստոսի 23
Երևան